

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՎՊՄԻ-ի ռեկտոր

_____ Գ.Կ. Խաչատրյան
“ 30” __04__ 2010թ.

Կ Ա Ր Գ

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտի պետական ոչ առևտրային կազմակերպության քոլեջի ուսանողների կուրսից կուրս
փոխադրման, ավարտական քննությունների անցկացման և նույն կուրսում կրկնակի ուսուցման
թողնելու, հեռացման, վերականգնման

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում
(արձանագր. թիվ _4_ “_30_ “__04__ 2010թ.)

Քննությունների անցկացումը և կուրսից կուրս փոխադրումը

1. Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պետական ոչ առևտրային կազմակերպության քոլեջի (այսուհետ՝ քոլեջի) ուսանողների կուրսից կուրս փոխադրումը իրականացվում է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ինստիտուտի) ռեկտորի հրամանով, ուսանողի կողմից տվյալ կուրսի ուսումնական պլանի պահանջներն ամբողջությամբ կատարելու, կուրսային քննությունները և ստուգարքները հաջողությամբ հանձնելու դեպքում:

2. Ուսանողների առաջադիմության միջանկյալ և եզրափակիչ ատեստավորման ու ընթացիկ վերահսկողության ձևերը, կարգը և պարբերականությունը սահմանվում են ինստիտուտի կողմից քոլեջի համար սահմանված պլաններով և առարկայական ծրագրերով:

3. Քննությունը ուսումնական պլանի պահանջներին համապատասխան որևէ ուսումնական առարկայից կամ նրա առանձին բաժնից սովորողների գիտելիքների ամփոփիչ ստուգումն ու վերջնական գնահատումն է: Անց է կացվում մեկ մանկավարժի կամ հանձնաժողովի կողմից:

Կուրսային քննությունները նպատակ ունեն գնահատելու ուսանողի տեսական գիտելիքները, նրա ստեղծագործական մտածողության ունակությունը, ձեռք բերած ինքնուրույն աշխատանքի կարողությունները, ստացած գիտելիքները համադրելու և այն գործնական խնդիրներ լուծելիս կիրառելու հմտությունը:

4. Ստուգարքը ուսումնական պլանին համապատասխան ծրագրային նյութի յուրացմանն ուղղված սովորողի անհատական գործնական աշխատանքի արդյունքների ամփոփումն է, առանց դրա կատարման գնահատականի:

Տարբերակված ստուգարքը սովորողների ատեստացիայի ձև է, որի արդյունքում յուրաքանչյուրին դրվում է գնահատական ելնելով իր գիտելիքներից, այսինքն՝ տարբերակված:

Ստուգարքները ծառայում են սովորողների կողմից լաբորատոր և կուրսային աշխատանքների (նախագծերի) կատարումը, գործնական և սեմինար պարապմունքներից ուսումնական նյութի յուրացումը, ստուգելուն, ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքները գնահատելուն: Ստուգարքներ կարող են սահմանվել ինչպես ամբողջ առարկայի, այնպես էլ նրա առանձին մասերի համար:

5. Ուսանողները պարտավոր են ստուգարքները և քննությունները հանձնել ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան:

6. Ուսանողները կարող են քննություններ և ստուգարքներ հանձնել ուսումնական պլաններից դուրս՝ նախասիրական առարկաներից, որի արդյունքներն իրենց ցանկությամբ կարող են փոխանցվել գնահատականների ամփոփիչ տեղեկագիր և ստուգարքային գրքույկ:

7. Կիսամյակային քննությունները հանձնվում են ուսումնական պլաններով սահմանված կիսամյակային քննաշրջանների ժամանակ:

Պարապող դասախոսի ներկայացմամբ, ինստիտուտի ռեկտորը, գերազանց առաջադիմություն ցուցաբերող ուսանողներին կարող է թույլատրել ուսումնական տարվա ընթացքում ժամկետից շուտ հանձնելու քննությունները (ստուգարքները)՝ ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով սահմանված լաբորատոր և գործնական աշխատանքները ամբողջությամբ կատարելու և դրական գնահատվելու պայմանով՝ առանց ազատվելու մնացած առարկաների պարապմունքներից:

Անհատական ուսումնական պլաններով սովորող ուսանողները կարող են քննությունները և ստուգարքները հանձնել մինչև կիսամյակային քննաշրջանը՝ ուսումնական մասի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում:

8. Ուսանողները թույլատրվում են մասնակցելու կիսամյակային քննաշրջանին՝ ուսումնական պլանով տվյալ կիսամյակում նախատեսված առարկաների լաբորատոր և այլ աշխատանքները կատարելու, բոլոր ստուգարքները հանձնելու պայմանով:

Հարգելի պատճառի առկայության դեպքում, ուսանողի դիմումի հիման վրա ինստիտուտի ռեկտորը կարող է տվյալ կիսամյակում ոչ քննական առարկայից ստուգարք չհանձնած ուսանողին թույլատրել մասնակցելու կիսամյակային քննաշրջանին:

9. Փաստաթղթով հիմնավորված, հարգելի պատճառով սահմանված ժամկետներում քննություններին և ստուգարքներին չմասնակցած ուսանողների համար ինստիտուտի

ուսումնական մասի ղեկավարը սահմանում է քննությունների ու ստուգարքների հանձնման անհատական ժամանակացույց:

10. Կիսամյակային քննությունների ժամանակացույցը հաստատվում է ինստիտուտի ռեկտորի կողմից, քննությունների սկզբից առնվազն մեկ ամիս առաջ իրազեկվում դասախոսներին և ուսանողներին:

Քննությունների ժամանակացույցը կազմվում է այն հաշվարկով, որպեսզի յուրաքանչյուր քննական առարկային նախապատրաստվելու համար հատկացվի առնվազն 2 օր:

11. Քննության ներկայանալիս ուսանողները պարտավոր են իրենց հետ ունենալու ստուգարքային գրքույկ, որը քննությունից առաջ ներկայացվում է քննող դասախոսին:

12. Քննությունների և ստուգարքների անցկացման ձևը՝ բանավոր, գրավոր, թեստավորում, աշխատանքի պաշտպանություն և այլն, սահմանում է ուսումնական վարչությունը ցիկլային հանձնաժողովի ներկայացմամբ: Քննությունների անցկացման ձևի մասին ուսանողները տեղեկացվում են ուսումնական կիսամյակի սկզբին:

Կիսամյակային ամփոփիչ գնահատականները և ստուգարքները նշանակվում են առանց ուսանողների հարցման, ընթացիկ գնահատականների հիման վրա: Գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում ուսանողը իրավասու է հանձնելու ստուգարք ընդհանուր հիմունքներով:

Եթե քննությունը, ստուգարքը անց է կացվում քննատոմսերով, և ուսանողը դժվարանում է պատասխանել հարցերին, դասախոսը ծրագրի սահմաններում կարող է տալ լրացուցիչ հարցեր:

13. Քննություններն ընդունում են տվյալ առարկաների դասախոսները, իսկ ստուգարքները՝ լաբորատոր, գործնական պարապմունքների ղեկավարները կամ առարկան դասավանդող դասախոսները:

14. Քննությունների և ստուգարքների անցկացման ժամանակ արգելվում է այլ անձանց ներկայությունը քննասենյակում՝ առանց ինստիտուտի ռեկտորի կամ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորների թույլտվությամբ:

15. Ուսանողների առաջադիմությունը գնահատվում է «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար»:

Եթե միևնույն դասընթացի տարբեր բաժինները դասավանդվում են մի քանի դասախոսների կողմից, ապա քննությունը կարող է անցկացվել բոլոր դասավանդողների մասնակցությամբ, բայց նշանակվում է մեկ գնահատական:

Դրական գնահատականները անց են կացվում քննական տեղեկագիր և ստուգարքային գրքույկ, իսկ անբավարար գնահատականները միայն քննական տեղեկագիր: Քննության չներկայանալը նշվում է քննական տեղեկագրում՝ «Չի ներկայացել» նախադասությամբ: Քննական տեղեկագիրը ներկայացվում է ուսումնական մաս քննության ընդունման օրը:

16. Ստուգարքների ընդունման արդյունքները գնահատվում են «Ստուգված է» և «Ստուգված չէ»: Տարբերակված ստուգարքները («գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար») նշանակվում են կուրսային աշխատանքներից (նախագծերից), մանկավարժական և արտադրական պրակտիկաներից:

17. Ակադեմիական պարտքերի մարումը իրականացվում է քննաշրջանի ավարտին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում: Բացառիկ դեպքերում և հարգելի պատճառների առկայության դեպքում ակադեմիական պարտքերը կարող են մարվել քննաշրջանի ավարտից հետո՝ ոչ ուշ 30 օրվա ընթացքում, ուսումնական մասի կազմած ժամանակացույցին համապատասխան:

Քննաշրջանի ընթացքում երեք և ավելի առարկաներից անբավարար գնահատականներ ստացած ուսանողներին քննությունների վերահանձնում չի թույլատրվում:

18. Քննաշրջանի ընթացքում ստուգարքներից և քննություններից ստացած անբավարար գնահատականների վերահանձնում չի թույլատրվում:

Քննության վերահանձնումը միևնույն դասախոսի մոտ թույլատրվում է մեկ անգամ, որից հետո, ուսանողի ցանկությամբ, կարող է նշանակվել ևս մեկ վերահանձնում հանձնաժողովին, որի կազմում ընդգրկվում են ուսումնական մասի ներկայացուցիչը և տվյալ առարկայի երկու մասնագետ: Եթե հանձնաժողովը հաստատում է «անբավարար» գնահատականը, ապա ուսանողը հեռացվում է ուսումնական հաստատությունից:

19. Միջանկյալ և եզրափակիչ ատեստավորումների, ստուգարքների ու քննությունների հանձնման, ակադեմիական պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանի արդյունքով ուսանողը հեռացվում է ուսումնական հաստատությունից՝

ա) քննաշրջանում երեք և ավելի առարկաներից, անբավարար ստանալու դեպքում.

բ) սահմանված ժամկետում ակադեմիական պարտքերը չմարելու պատճառով.

գ) ակադեմիական, մանկավարժական պրակտիկաների ծրագիրը չկատարելու կամ հաշվետվության պաշտպանության ժամանակ «անբավարար» գնահատական ստանալու դեպքում, եթե արդեն ունեն երկու «անբավարար» գնահատական կուրսային քննություններից:

20. Պրակտիկայի ծրագիրը չկատարած կամ հաշվետվության պաշտպանությունից «անբավարար» գնահատված ուսանողները ուղարկվում են կրկնակի անգամ պրակտիկա անցնելու ուսումնական պարապմունքներից ազատ ժամանակ:

21. Ուսումնական պլանի ընթացիկ ուսումնական տարվա թեկուզ մեկ առարկայից չատեստավորված ուսանողները հաջորդ կուրս չեն փոխադրվում:

22. Ուսումնառության ողջ ընթացքում թույլատրվում է գնահատականի բարձրացման նպատակով երկուսից ոչ ավելի առարկաներից քննությունների կրկնակի վերահանձնում ուսանողի դիմումի հիման վրա, ինստիտուտի ռեկտորի թույլտվությամբ:

23. Պետական ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է ՀՀ ԿԳ նախարարի 2006թ. հուլիսի 18-ի N638-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման մասին» կարգին համապատասխան:

II Ուսանողի հեռացումը (ազատումը), նույն կուրսում կրկնակի ուսուցման թողնումը

24. Ուսանողը կարող է ազատվել ինստիտուտի քոլեջից՝

ա) անձնական դիմումի համաձայն:

բ) այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու պատճառով:

25. Ինստիտուտի ղեկավարության նախաձեռնությամբ ուսանողը հեռացվում է՝

ա) չառաջադիմելու և սահմանված ժամկետում ակադեմիական պարտքերը չմարելու պատճառով.

բ) Ինստիտուտի կանոնադրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու պատճառով.

գ) Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով.

դ) պայմանագրի պայմանները չկատարելու, այդ թվում ուսման վարձը չմուծելու պատճառով: Հեռացումը կատարվում է ինստիտուտի ռեկտորատի որոշմամբ, ռեկտորի արձակած հրամանով:

26. Անձնական ցանկությամբ ուսումնառությունը դադարեցնելու դեպքում ուսանողի ազատումը իրականացվում է դիմումի տրման օրից՝ մեկ ամսվա ընթացքում:

27. Ուսանողը կարող է թողնվել նույն կուրսում կրկնակի ուսուցման՝ վճարովի ուսուցման հիմունքով՝

ա) ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի պահանջները փաստաթղթով հիմնավորված հարգելի պատճառով չկատարելու պատճառով.

բ) ինստիտուտի ռեկտորատի որոշմամբ, եթե ուսանողը ենթակա է հեռացման անբավարար ընթացիկ կամ եզրափակիչ ակադեմիական առաջադիմության պատճառով:

28. Նույն կուրսում կրկնակի ուսուցման թողնվելու ենթակա այն ուսանողները, ովքեր համաձայն չեն վճարովի հիմունքով նույն կուրսում ուսուցումը շարունակելու, հեռացվում են ինստիտուտի քոլեջից սույն կարգի 24-րդ կետի ա) ենթակետին համապատասխան:

29. Ուսանողի ուսումնառությունը դադարեցվում է՝

ա) զինծառայության անցնելու կապակցությամբ՝ զորացրվելուց հետո ուսանողական իրավունքների վերականգնման իրավունքով.

բ) առողջական վիճակի պատճառով՝ բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ, որի ավարտից հետո ուսանողը կարող է շարունակել ուսուցումը:

պարտադիր է, բացառությամբ անհարգելի պատճառներով ուսանողի բացակայության պարագայի, որը հրամանի ձևակերպման գործընթացի կասեցման հիմք չի հանդիսանում:

31. Ուսանողին հեռացնելու(ազատելու) դեպքում ուսանողի դիմումի հիման վրա նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք, կրթության մասին հավաստող փաստաթղթի (հիմնական ընդհանուր կրթության վկայական, ատեստատ, դիպլոմ) բնագիրը, ինստիտուտի ռեկտորի կողմից վավերացված պատճենը թողնելով ուսանողի անձնական գործում:

III Ուսանողների վերականգնումը

32. Ինստիտուտի քոլեջից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են ուսուցման բոլոր ձևերում ինստիտուտի ռեկտորատի որոշման հիման վրա ռեկտորի հրամանով:

Իր դիմումի հիման վրա կամ հարգելի պատճառով ազատված ուսանողների վերականգնումը թույլատրվում է ուսումնառության մինչև 5 տարվա ընդհատման դեպքում:

Սույն կարգի 24-րդ կետի ա), բ), գ) ենթակետերում նշված պայմաններով ինստիտուտի քոլեջից հեռացված ուսանողների վերականգնումը թույլատրվում է ուսումնառության մինչև 3 տարվա ընդհատման դեպքում:

Ավելի մեծ ժամկետով ընդհատման դեպքում վերականգնումը, ինստիտուտի դրական կարծիքի ներկայացմամբ, կատարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլտվությամբ:

Ձինծառայության ժամկետը չի մտնում ուսումնառության ընդհատման ժամանակահատվածի մեջ:

33. Ուսանողների վերականգնումը թույլատրվում է՝ սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթվա ընթացքում:

34. Ինստիտուտի քոլեջից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել են:

35. Ինստիտուտի ռեկտորը 1 շաբաթվա ընթացքում քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը և որոշում նրա ընդունման ժամկետը, կուրսը և մյուս պայմանները կամ պատճառաբանված հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը: Վերականգնման ժամանակ դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը և կրթության մասին հավաստող փաստաթղթի բնագիրը:

36. Ինստիտուտի ռեկտորն իրավունք ունի մեկ կամ երկու ակադեմիական պարտք ունեցող ուսանողներին վերականգնել և թույլ տալ շարունակել ուսուցումը հաջորդ կիսամյակում կամ հաջորդ կուրսում, եթե ուսանողները մինչև այդ կիսամյակի կամ կուրսի սկիզբը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կազմած քննական հանձնաժողովում հանձնում են այդ ակադեմիական պարտքերը:

37. Ուսումնական պլանների փոփոխման պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր, որոնք ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի վերականգնման մասին տրված հրամանում նշված ցանկով, ծավալներով և անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

Վերջին կուրսի ավարտական կիսամյակում վերականգնված ուսանողների ուսուցումը կատարվում է հեռացման (ազատման) տարում գործող ուսումնական պլաններին համապատասխան:

38. Ինստիտուտի քոլեջից հեռացված (ազատված) կամ նույն կուրսում կրկնակի ուսուցման թողնված ուսանողները վերականգնվում և շարունակում են ուսուցումը վճարովի հիմունքով:

39. Անվճար ուսուցման հիմունքով ուսուցումը կարող են շարունակել՝

ա) առողջական վիճակի պատճառով ձևակերպած ակադեմիական արձակուրդի ավարտից հետո վերականգնվող, իրենց դիմումի համաձայն ինստիտուտի քոլեջից ազատված և զինծառայությունից զորացրված, նախկինում անվճար հիմունքով ուսումնառող ուսանողները:

գ) 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ ուսանողները.

դ) հղի կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող ուսանողուհիները.

ե) ՀՀ և ԼՂՀ պաշտպանության մարտերում վիրավորված ուսանողները կամ զոհված զինծառայողների և ազատամարտիկների ընտանիքի անդամները:

40. Վերականգնված ուսանողի անձնական գործին կցվում են վերականգնման մասին հրամանի պատճենը, ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, կրթության մասին հավաստող փաստաթղթի (հիմնական ընդհանուր կրթության վկայական, ատեստատ, դիպլոմ) բնագիրը: